ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27-ը օգոստոսի 2014 թվականի N 85-Ա
ք. Աշտարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 17-Ի N87-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերով և Հայաստանի ՀանրապետությանՆախագահի 1997 թվականի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով

ո ր ո շ ու մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2010 թվականի հունիսի 17-ի <<Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի մի շարք ստորաբաժանումների կանոնադրությունները հաստատելու մասին>> N87-Ա որոշմամբ հաստատված N8 հավելվածի 2-րդ բաժինը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

Ժ/Պ
ԱԲԳԱՐՅԱՆ

Մ.

Հավելված N
ՀՀ Արագածոտնի մարզպետի
2014 թվականի օգոստոսի 27 -ի
N 85 -Ա որոշման

II. ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

5. Տեսչությունն իր լիազորությունների շրջանակներում՝

ա) վերահսկում է Արագածոտնի մարզի (այսուհետ՝ Մարզ) համայնքների վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականության հողերը.

բ) վերահսկում է Մարզի սահմանանիշների և գեոդեզիական կետերի պահպանումը .

գ) վերահսկում է Մարզի համայնքների վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականություն համարվող տարածքներում պատվիրատուի գործառությունները.

դ) կազմակերպում է Մարզի հողերի օգտագործման սխեմաները սահմանված կարգով միջգերատեսչական հանձնաժողովի քննարկմանը ներկայացնելու աշխատանքները.

ե) կազմում է Մարզի հողային հաշվեկշիռը.

զ) վերահսկում է համայնքների ղեկավարների գործունեությունը հողային հարաբերությունների բնագավառում.

է) վերահսկողություն է իրականացնում պետության և համայնքային սեփականություն համարվող հողերի օտարման գործընթացի նկատմամբ.

ը) համակարգում է պետության և համայնքային սեփականություն համարվող հողերի օգտագործման տրամադրման մրցույթների կազմակերպման և անցկացման գործընթացը.

թ) կազմակերպում է համայնքների վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականություն համարվող վարձակալության տրամադրված հողերի վարձավճարների գանձման և նոր պայմանագրերի կնքման և գրանցման աշխատանքները.

ժ) կազմակերպում է համայնքների հողերի օգտագործման սխեմաների, բնակավայրերի գլխավոր հատակագծերի նախագծերի իրականացման աշխատանքները.

ժա) կազմակերպում է Մարզի տարածքում հանրապետական և տարածքային հողաշինարարական նախագծերի իրականացման աշխատանքները.

ժբ) կազմակերպում է ընթացիկ ստուգումներ մարզպետի կողմից հաստատված ամենամյա ժամանակացույցին համապատասխան՝ ըստ համայնքների, համաձայնեցնելով իրավական հսկողության բարձրագույն մարմնի հետ.

ժգ) իրականացում է վերահսկողություն պետության և համայնքային սեփականություն համարվող հողերի բերրիության, հողի այլ օգտակար հատկությունների պահպանման, բարելավման և արդյունավետ օգտագործման գործընթացի նկատմամբ.

ժդ) համակարգում է պետության և համայնքային սեփականություն համարվող հողերի խախտման հետ կապված աշխատանքներ կատարելիս հողի բերրի շերտի հանման, պահպանման և օգտագործման գործընթացը.

ժե) համակարգում է մարզի տարածքում համայնքների վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականություն համարվող հողամասերի օգտագործման տրամադրման մրցույթների կազմակերպման և անցկացման գործընթացը.

ժզ) կազմակերպում է մարզի համայնքների վարչական սահմանների փոփոխման վերաբերյալ կառավարություն առաջարկություններ ներկայացնելու աշխատանքները:

ՀՀ Արագածոտնի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար
Հ.ԳԵՎՈՐԳՅԱՆ